Թիւն առանալ։ Տեսեալ Հայոց եւ բարուք իմացեալ թէ սա եւս կալաւ զճանապարհ նախորդին իւրոյ, ասեն յայտնապէս, կամ անթերի կատարեա զգործն, կամ տուր պատասխանի, զի գրեսցուք առ որ հարկն է։

Եւ նա ասէ՝ կատարեմ զհրաման Արքային, բայց զոր ինչ գրեալ է զայն առնեմ. տամ զքանալիս Ծննդեան և Աստուածածնի, բայց կանթեղ, պատկեր կախել և կատարել զօրէնս ոչ հրամայեմ. ասեն Հայք՝ նախորդն քո վասն այդորիկ բանից գնաց յաքսորս, եթէ 'ի նոյն չէր մարթ կատարել զօրէնս մեր, ընդէ՞ր աշխատ արարաք զՏէրութիւնն զամս կ 'ի լսել զդատաստանս երկուց ազգաց, եւ վասն է՞ր ջնջեցաւ հրովարտակն 1224։ Աստ 'ի մէջ բերին զիմաստ հրովարտակին մի առ մի, և եթէ 'ի հրովարտակին Հայոց պատարագ պատկեր և կանթեղ չեն գրեալ, նոյնպէս և 'ի Յունացն, և եթէ Յոյնք ունէին զայնս, Հայք եւս ունէին, բայց ժամանակ առ ժամանակ յաղթահարեալ զնոսա առելութեամբ և մախանօք՝ բարձին զայն, այլ այն ամենայն էանց, այժմ ամենայն ինչ հաւասար Յունաց պարտ է լինիլ. ասա բացատրեն զոմանս 'ի բառից հրովարտակին, ըստ օրինաց իւրեանց կատարել զծէսս և չլինիլ խափան իրերաց. թէպէտեւ Դատաւորն երկնչիլ ձեւանայր 'ի սրոյ Թագաւորին, և առաջի աչաց ունէր զդատապարտութիւն նախորդին իւրոյ, բայց սիրտ նորա յարեալ էր 'ի գանձս Յունաց, նմին իրի իրաւախոհ բառն կրկնէր միշտ։

Յոյնք խնդրէին երկամսեայ միջոց ժամանակի բերել հրովարտակ արքունուստ առ 'ի խափանել զխնդիրն Հայոց. սակայն միտք նոցա էր սպասել դարձի կուսակալին յուխտադնացութենէ իւրմէ։ Ապա կոչեալ Դատաւորին առանձին զՅոյնս ասէր՝ Հայք ըստ հրամանի Արքային ունին իրաւունս լինիլ ձեզ հաւասար 'ի Բեթղեհէմ և յԱստուածածին, այլ 'ի սէր ձեր փութամ սակաւ իրօք հաճեցուցանել զնոսա. նոյնպէս կոչեալ զՀայս ասէր՝ թէ Յոյնք բնաւ ոչ հաճին ձեռն մխել ձեզ 'ի տեղիսն յայնոսիկ, այլ եւ վաստակիմ փոքու իւիք մասնակից առնել զձեզ, զի կատարեսցին կամք ձեր։ Այսպէս խորամանկութեամբ կամէր որսալ զերկոսին կողմ՟ս 'ի շահ անձին իւրոյ։ Նուրի էֆէնտի և Զուխատարն թէ և գիտէին զերթեւեկութիւն